Հավելված

Դրախտիկ համայնքի ավագանու

2017թ օգոստոսի 28-ի

թիվ 14-Ն որոշման

Կ ա ր գ

Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ Դրախտիկ համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու

I Ընդհանուր դրույթներ

1.Տեղական ինքնակառավարմանն առընչվող օրենսդրական և , ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի (այսուհետ՝ նաև իրավական ակտ) հանրային բաց լսումները և (կամ) քննարկումները ,(այսուհետ նաև հանրային քննարկումներ) իրավական ակտերի նախագծերի մասին շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկման ,ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքման աշխատանքների իրականացման գործընթաց է:

2.Հանրային քննարկումների հիմնական խնդիրներն են՝ քննարկման դրված հարցերի վերաբերյալ հանրային կարծիքի բացահայտումը,այլընտրանքային տարբերակների,հնարավոր ծախսերի , օգուտների և հավանական ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունների ստացումը և իրավաստեղծ աշխատանքներում հասարակության մասնակցության ապահովումը:

3.Հանրային քննարկումների իրականացման սկզբունքներն են՝ հրապարակայնությունը,մատչելիությունը և թափանցիկությունը:

4.Հանրային քննարկումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք: